ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2020 թվականի № Ա

քաղ. Երևան

«ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի նոյեմբերի 30-ի №438Ա որոշմամբ «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածքում (գյուղ Զեդեա) կառուցված «Վայոց Արև-1» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0628 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա), ինչի համար ի թիվս այլ փաստաթղթերի հիմք է հանդիսացել նաև որպես Կայանի կառուցման համար անհրաժեշտ ներկայացված 4,49763 հա հողամասի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման №31102018-10-0008 վկայականը,
2) Ընկերությունը 2020 թվականի սեպտեմբերի 29-ի գրությամբ հայտնել է, որ ցանկանում է ընդլայնել Կայանի կառուցման համար նախատեսված հողատարածքը՝ 4,49763 հեկտարից այն դարձնելով 6,8213 հեկտար, և խնդրել Լիցենզիայով նախատեսված էլեկտրաէներգիայի արտադրությունն ապահովելու նպատակով հիշյալ հողատարածքը ընդլայնել՝ այն սահմանելով 6,8213 հեկտար,
3) Ընկերությունը 2020 թվականի սեպտեմբերի 29-ին ներկայացրել է արտադրության փուլ անցնելու նպատակով Լիցենզիայում փոփոխություններ կատարելու մասին դիմում և սակագնի սահմանման (վերանայման) հայտ՝ ի թիվս այլ փաստաթղթերի կից ներկայացնելով նաև Կայանի կառուցման (շահագործման և սպասարկման) համար

անհրաժեշտ 6,8213 հա հողամասի և դրա վրա կառուցված Կայանի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը,

4) Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 8-ի №ՍՇ34.1-Մ4-3/4264-2020 գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №348Ն որոշմամբ 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշման մեջ կատարված փոփոխության, ինչպես նաև այն մասին, որ Ընկերության գրությամբ նկարագրված հողամասի տարածքի ընդլայնման տարբերակի ընտրությունից ելնելով՝ «Վայոց Արև-1» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը սահմանելիս Ընկերության նկատմամբ կկիրառվի վերոնշյալ փոփոխությամբ ամրագրված իրավակարգավորումը,

5) Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 13-ի №ՍԱ/34.1-Մ4-3/4250-2020 գրությամբ, հիմք ընդունելով իր 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 46-րդ կետը և 25-րդ կետի 1-ին ենթակետը, մերժել է Ընկերության ներկայացրած՝ Լիցենզիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 2020 թվականի սեպտեմբերի 29-ին Հանձնաժողով ներկայացված դիմումը և, հիմք ընդունելով իր 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի 12-րդ կետի 3-րդ ենթակետը ուսումնասիրության չի ընդունել սակագնի սահմանման՝ հայտը,

6) Ընկերությունը 2020 թվականի հոկտեմբերի 15-ի հայտով, ըստ էության, հայտնել է, որ վերացրել է Հանձնաժողովի հոկտեմբերի 13-ի ՈՍԱ/34.1-Մ4-3/4250-2020 գրությամբ նշված թերությունները, կրկին խնդրել է համապատասխան փոփոխություններ կատարել Լիցենզիայում և սկսել սակագնի սահմանման հայտի ուսումնասիրությունը՝ նշելով, որ 2020 թվականի սեպտեմբերի 29-ին ներկայացված սակագնի սահմանման հայտով Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ տեղի չեն ունեցել,

7) Ընկերությունը Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 29-ի №ԱՍ/34.3-Մ2-7/4453-2020 գրությամբ տեղեկացվել է, որ 2020 թվականի հոկտեմբերի 15-ին Հանձնաժողով ներկայացված՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտն ընդունվել է ուսումնասիրության,

8) Ընկերությունը 2020 թվականի հոկտեմբերի 30-ի գրությամբ, մատնանշելով մի շարք իրավանորմեր և դրանց առնչությամբ մեկնաբանություններ, հայտնել է իր

անհամաձայնությունը Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 8-ի №ՍՇ34.1-Մ4-3/4264-2020 և 2020 թվականի հոկտեմբերի 29-ի №ԱՍ/34.3-Մ2-7/4453-2020 գրություններով արտահայտված տեսակետների վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերությունը պնդել է, որ իր և Հանձնաժողովի միջև էլեկտրաէներգիայի արտադրությունն ապահովելու նպատակով հողատարաքծի ընդլայնման և դրանից բխող, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացված հայտից բխող ածանցյալ իրավահարաբերությունները ծագել են Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №348Ն որոշման ընդունումից առաջ՝ սեպտեմբերի 29-ին, այսինքն համապատասխան գրությունն ու հայտը վարչական մարմնում ստանալու օրվանից: Նշվածից ելնելով՝ Ընկերությունը Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №348Ն որոշմամբ ամրագրված իրավակարգավորման կիրառումը Ընկերության նկատմամբ համարում է վատթարացնող նորմին հետադարձ ուժով օժտել, ինչն անթույլատրելի է,

9) 2020 թվականի հոկտեմբերի 6-ից գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա) 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Մեթոդիկայի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ առաջին անգամ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում սահմանվելու պարագայում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում՝ սահմանվում է Մեթոդիկայի 3-րդ կետի 2-րդ

ենթակետի «ա» պարբերության համաձայն համապատասխան ժամանակահատվածի համար ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար,

10) Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի 11-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ հայտը Հանձնաժողովում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կարգի 14-15-րդ կետերի համաձայն՝ հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում հայտատուն, հայտնաբերված թերությունները վերացնելուց հետո, կարող է **նոր հայտով** դիմել Հանձնաժողով: Այդ դեպքում հայտատուն իրավունք ունի հղում կատարել նախկին հայտով ներկայացված փաստաթղթերին, եթե դրանցում ներկայացված տվյալները նոր հայտի ներկայացման պահին չեն փոփոխվել:

Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովը հայտն ընդունում է ուսումնասիրության,

11) Ընկերության կողմից ներկայացված՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ այդ սակագինը ենթակա է սահմանման ներկայումս գործող Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն, քանի որ տեղի է ունեցել Լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված Կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի փոփոխում: Ինչ վերաբերում է Ընկերության պնդումներին, ապա դրանք Հանձնաժողովի գնահատմամբ անհիմն են: Մասնավորապես, անդրադառնալով Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանմանն ուղղված իրավահարաբերության ծագման պահին՝ Հանձնաժողովը փաստում է, որ այդ պահը ոչ թե Ընկերության կողմից առաջին հայտի ներկայացման օրն է՝ 2020 թվականի սեպտեմբերի 29-ը, այլև նույն թվականի հոկտեմբերի 15-ը: Նշվածն առավել քան ակնհայտ է Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի՝ վերաշարադրյալ իրավանորմերի բովանդակությունից: Մասնավորապես, Ընկերության 2020 թվականի սեպտեմբերի 29-ի հայտի ստուգման արդյունքը եղել է բացասական, ինչից ելնելով էլ այն չի ընդունվել ուսումնասիրության: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 15-ի հայտը հիշյալ կարգի 14-րդ կետի համաձայն՝ դիտարկվում է որպես նոր հայտ, որն էլ գործող

իրավակարգավորումներին համապատասխանության հիմքով ընդունվել է ուսումնասիրության: Հետևաբար հենց այդ պահից է ծագել համապատասխան իրավահարաբերությունը, և Ընկերության նկատմամբ որևէ իրավանորմի հետադարձ ուժի կիրառման մասին խոսք լինել չի կարող:

Շարադրվածը բավարար համարելով Ընկերության պնդումները հերքելու համար՝ Հանձնաժողովն այդուհանդերձ հարկ է համարում նշել նաև, որ քննարկվող իրավակարգավորումը ոչ թե բարելավում կամ վատթարացնում է տնտեսվարող սուբյեկտների իրավական վիճակը, այլ նրանց համար ստեղծում ընտրության հնարավորություն, այն է՝ կամ կայանը կառուցել լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված հողատարածքում և էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման պայմաններով՝ ունենալով ի սկզբանե սահմանված սակագինը, կամ կառուցել փոփոխված (ընդլայնված) հողատարածքում կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալ փոփոխված պայմաններով՝ ունենալով 10%-ով ցածր սակագին: Այսինքն, տնտեսվարող սուբյեկտը հնարավորություն ունի գնահատելու և նշված տարբերակներից ընտրելու իր համար առավել ընդունելի տարբերակը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն, Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 27-ի №176Ն որոշումները՝ Հանձնաժողովը որոշում է.

1. «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վայոց Արև-1» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 21.891 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 26.269 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի նոյեմբերի -ից և գործում է մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
նոյեմբերի 2020թ.